Կարգապահական գործ թիվ ԿԳ-23017

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐԹՈՒՐ ՄԻՔԱՅԵԼԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ, զեկուցող՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վահե Աստվածատրյանի, Գուրգեն Թորոսյանի, Հայկ Սահակյանի և Վահագն Քեշիշյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ՝ փաստաբան Արթուր Սուքիասյանի **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)**,

քննության առնելով փաստաբան Արթուր Սուքիասյանին (արտոնագիր՝ թիվ 1251), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Նելլի Գրոյի Մարտիրոսյանը **(այսուհետ՝ նաև Դիմող),** դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ՝ նաև Պալատ),** հայտնել է, որ 2021թ. փաստաբան Արթուր Սուքիասյանն իր համար կազմել է հայցադիմում:

Ըստ Դիմողի, նույն փաստաբանը 15.02.2023 թվականին օրինազանց Գ. Մարտիրոսյանի շահերը ներկայացնելով դիմել է վարչական դատարան 01.08.2022 թվականի Վանաձոր համայնքի ղեկավարի թիվ 302 որոշման անվավեր ճանաչելու պահանջով:

Նշվածի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է փաստաբանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

2. **<u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>**

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Արթուր Սուքիասյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Նելլի Գրոյի Մարտիրոսյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 2023 թվականի մարտի 13-ին ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ 2021 թվականի նոյեմբեր ամսին, որպես հանրային պաշտպան, Նելլի Մարտիրոսյանի համար կազմել է հայցադիմում ընդդեմ Գայանե Մարտիրոսյանի բազմաբնակարան շենքի արտաքին պատը նախկին տեսքին բերելու և բնակարանի ոչ նպատակային նշանակության օգտագործումը դադարեցնելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

Ըստ Փաստաբանի, հայցադիմում կազմելուց բացի որևէ այլ փաստաբանական գործողություն Նելլի Մարտիրոսյանի համար չի կատարել, քանի որ 2022 թվականի հունվարի 01-ից հանրային պաշտպանի գրասենյակում այլևս չի աշխատում և իր կողմից կազմված հայցադիմումի հիման վրա քննվող գործող դատական ներկայացուցչություն չի իրականացրել, ուստի հայցադիմումում նշված հանգամանքներից բացի Նելլի Մարտիրոսյանի ունեցած իրավական խնդիրների վերաբերյալ որևէ այլ փաստեր իրեն հայտնի չեն:

2022 թվականի հոկտեմբեր ամսին իրեն է դիմել քաղաքացի Գայանե Մարտիրոսյանը՝ իրեն պատկանող խանութին կից աստիճանները քանդելու խնդրի վերաբերյալ իրավաբանական օգնություն ստանալու նպատակով:

Աստիճանների քանդման վերաբերյալ վարչական ակտ կայացված լինելու մասին տեղեկատվություն ստանալու նպատակով 24.10.2023թ. իր կողմից փաստաբանական հարցում է կատարվել Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատարին: Ի պատասխան իր գրության տրամադրվել է Վանաձոր համայնքի ղեկավարի 01.08.2022թ. թիվ 302 որոշման պատճենը:

Ըստ Փաստաբանի, Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից իրեն տրամադրված թիվ 302 որոշման բովանդակության մեջ Նելլի Մարտիրոսյանի վերաբերյալ որևէ նշում չի եղել և վերջինիս պնդմամբ, ինքն որևէ հիմք չի ունեցել ենթադրելու, որ իրեն դիմած Գայանե Մարտիրոսյանի խնդիրը որևէ կերպ առնչություն ունի Նելլի Մարտիրոսյանի հետ կամ շոշափում է վերջինիս իրավունքները:

Փաստաբանը հայտնել է, որ Հանրային պաշտպանի գրասենյակում 6 տարի աշխատելու ընթացքում բազմաթիվ քաղաքացիների համար կազմել է հայցադիմումներ և այդքան հայցադիմումների մեջ նշված պատասխանողների անունները բնականաբար չէր հիշում: Հետևաբար, չէր կարող հասկանալ, որ իրավաբանական օգնություն ստանալու համար իրեն դիմած Գայանե Մարտիրոսյանը Նելլի Մարտիրոսյանի հայցադիմումում որպես պատասխանող նշված Գայանե Մարտիրոսյանն է:

02.12.2022թ. իր և Գայանե Մարտիրոսյանի միջև կնքվել է իրավական օգնություն ցույց տալու մասին պայմանագիր և 09.12.2022թ. իր կողմից ՀՀ վարչական դատարանին ներկայացվել է Վանաձոր համայնքի ղեկավարի 01.08.2022թ. թիվ 302 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմում (վարչական գործ՝ թիվ ՎԴ6/0313/05/22):

Փաստաբանը նաև հավելել է, որ Գայանե Մարատիրոսյանին իրավաբանական խորհրդատվություն տրամադրելիս որևէ հիմք չի ունեցել ենթադրելու, որ Նելլի

Մարտիրոսյանը Վանաձոր համայնքի ղեկավարի թիվ 302 որոշման հետ կապված ունի ինչ-որ շահեր:

Ըստ Փաստաբանի, ՀՀ փաստաբանների պալատի նախագահին ուղղված դիմումի բովանդակությունից ևս պարզ չէ, թե Նելլի Մարտիրոսյանն ինչ իրավական շահագրգռվածություն ունի կապված թիվ ՎԴ6/0313/05/22 վարչական գործի շրջանակներում վիճարկվող Վանաձոր համայնքի ղեկավարի 01.08.2022թ. թիվ 302 որոշման հետ:

Վերոգրյալի հիման վրա, Փաստաբանը գտնում է, որ իր կողմից որևէ խախտում թույլ չի տրվել, քանի որ որպես հանրային պաշտպան 2021 թվականին իր կողմից Նելլի Մարտիրոսյանին տրամադրված իրավաբանական խորհրդատվությունը վերաբերվել է բոլորովին այլ խնդրի, իսկ ներկայումս իր վստահորդ հանդիսացող Գայանե Մարտիրոսյանի խնդիրը կապված է ոչ թե Նելլի Մարտիրոսյանի հետ, այլ Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից կայացված որոշման հետ: Տարբեր են ինչպես վեճի կողմերը, այդպես էլ վեճի առարկաները:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 28.03.2023թ. թիվ 98-Ա/ԿԳ-23017 որոշմամբ փաստաբան Արթուր Սուքիասյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք)** 5-րդ հոդվածի 1-ին կետի, 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «ա» ենթակետի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագրք)** 3.2.2 ենթակետի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

22.02.2023թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Գարիկ Հախնազարյանին (**այսուհետ՝ նաև Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 31.05.2023թ. կազմել է եզրակացություն:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 06.06.2023թ.:

Հանձնաժողովի նիստերը տեղի են ունեցել 27.07.2023թ. ժամը 19:30-ին և 24.08.2023թ. ժամը 19:00-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

– Փաստաբան Արթուր Սուքիասյանը 2021թ. Նելլի Մարտիրոսյանի համար կազմել է հայցադիմում և հասցեագրել ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Գայանե Մարտիրոսյանի՝ բազմաբնակարան շենքի արտաքին պատը նախկին տեսքի բերելու և բնակարանի ոչ նպատակային նշանակության օգտագործումը դադարեցնելուն պարտավորեցնելու պահանջների մասին, որը ստացել է ԼԴ/6847/02/21 համարը: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով, հայցադիմումով, ինչպես նաև կողմերի բացատրությամբ:*

– 09.12.2022թ. Գայանե Մարտիրոսյանը (Ներկայացուցիչ Արթուր Սուքիասյան) ՀՀ վարչական դատարան է հասցեագրել հայցադիմում ընդդեմ Վանաձոր համայնքի ղեկավարի՝ խնդրելով մասնակի՝ Վանաձոր համայնքի Գր. Լուսավորչի փողոց, թիվ 37-2/3 հասցեում կառուցված բետոնե աստիճաններն ապամոնտաժելու հանձնարարություն տալու մասով (որոշման 2-րդ կետ) ճանաչել անվավեր, որը ստացել է ՎԴ6/0313/05/22 համարը: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով, հայցադիմումով, ինչպես նաև կողմերի բացատրությամբ:*

– Վանաձոր համայնքի ղեկավարի՝ 01.08.2022թ. թիվ 302 որոշման 2-րդ կետի համաձայն. «Հանձնարարել Վանաձորի համայնքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի և իրավապահ մարմինների օժանդակությամբ ապամոնտաժել Վանաձոր համայնքի Գր. Լուսավորչի փողոց, թիվ 37-2/3 հասցեում կառուցված բետոնե աստիճանները»: *Սույն փաստը հաստատվում է Վանաձոր համայնքի ղեկավարի՝ 01.08.2022թ. թիվ 302 որոշման պատճենով:*

– Նելլի Մարտիրոսյանը 28.02.2023թ. ներկայացրել է երրորդ անձ ներգրավելու վերաբերյալ դիմում, որը Դատարանի 29.03.2023թ. որոշմամբ բավարարել է: Միևնույն ժամանակ Դատարանը արձանագրել է, որ Նելլի Մարտիրոսյանի հասցեն դիմումում նշվել է «ք. Վանաձոր, Գր. Լուսավորչի 37, բն. 3», իսկ սույն վարչական գործով վիճարկվող որոշումը վերաբերում է Վանաձոր համայնքի Գր. Լուսավորչի փողոց, թիվ 37-2/3 հասցեում կառուցված բետոնե աստիճաններն ապամոնտաժելուն, Դատարանի գնահատմամբ այս գործով ընդունվելիք դատական ակտը կարող է շոշափել նաև Նելլի Մարտիրոսյանի իրավունքները: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով:*

– Նելլի Մարտիրոսյանը ՎԴ6/0313/05/22 վարչական գործով կազմել է հայցադիմումի պատասխան: *Սույն փաստը հաստատվում է հայցադիմումի պատասխանի պատճենով:*

– 16.05.2023թ. Փաստաբանը Դատարան է ներկայացրել միջնորդություն՝ 17.05.2023թ. նշանակված դատական նիստը հետաձգելու վերաբերյալ: Ըստ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի՝ ՎԴ6/0313/05/22 վարչական գործով նախնական դատական նիստ է նշանակվել 26.09.2023թ.: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով, ինչպես նաև փաստաբանի կողմից ներկայացված միջնորդության պատճենով:*

– Կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ ներկայացնելու մասին 08.05.2023թ. պահանջը Փաստաբանը ստացել է 16.05.2023թ.: *Սույն փաստը*

հաստատվում է փոստի հետադարձ ծանուցագրով:

– 25.07.2023թ. Փաստաբանի կողմից ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովին է ներկայացվել 14.03.2023թ. համաձայնագիրը, ըստ որի՝ Արթուր Սուքիասյանը և Գայանե Մարտիրոսյանը փոխադարձ համաձայնությամբ լուծում են 02.12.2022թ. կնքված իրավաբանական օգնություն ցույց տալու մասին պայմանագիրը: *Սույն փաստը հաստատվում է ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի նախագահին ուղղված գրության և կից ներկայացված համաձայնագրի պատճենով:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Արթուր Սուքիասյանը փաստաբան է հանդիսանում 15.10.2011թ. թվականից, և 2018-2023թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Արթուր Սուքիասյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «ա» ենթակետի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ Կանոնագրք) 3.2.2 ենթակետի խախտման համար, իսկ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետի ու 19-րդ հոդվածի 1-ին կետի մասերով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ *1. Փաստաբանը պարտավոր է առաջնորդվել առնվազն հետևյալ վարքագծի կանոններով.*

....

5) ցույց չտալ իրավաբանական օգնություն, երբ՝

.....

ա. առկա է հակասություն նույն հարցով իր կամ իր վստահորդների շահերի միջև

.....:

Կանոնագրքի 3.2.2-րդ ենթակետի համաձայն՝ Փաստաբանն իրավունք չունի իրավական օգնություն ցույց տալ երկու կամ ավելի վստահորդի նույն հարցով, եթե նրանց շահերի միջև հակասություն կա: Փաստաբանը պարտավոր է ցույց չտալ իրավաբանական օգնություն, երբ պետք է ներկայացնի վստահորդի շահերը որևէ գործում, և այդ անձի շահերը հակասում են նախկին վստահորդի շահերին, բացառությամբ այն դեպքերի, երբ նախկին վստահորդը տալիս է իր գրավոր համաձայնությունը (...):

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով*

<u>դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից</u>*, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից*:

Օրենքի այս պահանջը պարտադրում է նորմատիվ իրավական ակտը մեկնաբանել առնվազն տառացի նշանակությամբ:

Պալատի Հանձնաժողովը գտնում է, որ Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «ա» ենթակետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.2.2-րդ ենթակետում նշված իրավական հետևանքը հնարավոր է կիրառել, եթե վարքագծի կանոնի մեջ նշված հետևյալ փաստերն առկա լինեն, այն է՝

- Առկա է նախկին վստահորդ.
- Առկա է այլ (նոր) վստահորդ.
- Փաստաբանը իրավաբանական օգնություն է ցույց տալիս այլ (նոր) վստահորդին.
- Նախկին և այլ (նոր) վստահորդների շահերը հակասում են.
- Նախկին վստահորդը համաձայնություն չի տվել փաստաբանին իր այլ վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալ իր դեմ:

Վերլուծելով վերը նշված կանոնների պահանջները՝ Հանձնաժողովը գտնում է, որ Պատասխանող Արթուր Սուքիասյանի վարքագիծը գնահատելու համար անհրաժեշտ է ստանալ հետևյալ իրավական հարցադրումների պատասխանները.

1. Հանդիսացե՞լ է արդյոք Նելլի Մարտիրոսյանը Արթուր Սուքիասյանի վստահորդը:

2. Արդյո՞ք սույն գործով առկա վստահորդի շահերը հակասում են նախորդ վստահորդի շահերին:

3. Արդյո՞ք Արթուր Սուքիասյանը իրավաբանական օգնություն է ցույց տվել Նելլի Մարտիրոսյանի հակառակորդ կողմին:

4. Արդյո՞ք առկա է նախորդ վստահորդի համաձայնությունը, որ Պատասխանողն իրավաբանական օգնություն տրամադրի նրա հետ հակադիր շահեր ունեցող անձանց:

Պատասխանելով վերը թվարկված առաջին հարցադրմանը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբան Արթուր Սուքիասյանը 2021թ. Նելլի Մարտիրոսյանի համար կազմել է հայցադիմում և հասցեագրել ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Գայանե Մարտիրոսյանի՝ բազմաբնակարան շենքի արտաքին պատը նախկին տեսքի բերելու և բնակարանի ոչ նպատակային նշանակության օգտագործումը դադարեցնելուն պարտավորեցնելու պահանջների մասին, որը ստացել է ԼԴ/6847/02/21 համարը:

Հանձնաժողովը արձանագրում է, որ Օրենքում և Կանոնագրքում նշված վստահորդը այն անձն է, որին իրավաբանական օգնություն է ցույց տալիս փաստաբանը:

Պատասխանելով վերը թվարկված երկրորդ հարցադրմանը՝ Հանձնաժողովն

արձանագրում է, որ Նելլի Մարտիրոսյանը՝ որպես թիվ ՎԴ6/0313/05/22 գործով երրորդ անձ և Հայցվոր Գայանե Մարտիրոսյանը (Ներկայացուցիչ Արթուր Սուքիասյան) հանդիսանում են դատավարական հակառակորդներ, հետևաբար նրանց շահերի միջև կա հակասություն, քանի որ Վանաձոր համայնքի ղեկավարի՝ 01.08.2022թ. թիվ 302 որոշման 2-րդ կետի համաձայն պետք է ապամոնտաժել Վանաձոր համայնքի Գր. Լուսավորչի փողոց, թիվ 37-2/3 հասցեում կառուցված բետոնե աստիճանները, որը Հայցվորը դատարանից խնդրում է վերացնել, իսկ Դիմողը խնդրում է Դատարանից մերժել Հայցվորի պահանջը, քանի որ ինքը ևս տարիներ շարունակ պայքարում է աստիճանները ապամոնտաժելու համար:

Պատասխանելով վերը թվարկված երրորդ հարցադրմանը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն կարգապահական գործի փաստերով հաստատվում է, որ Գայանե Մարտիրոսյանը (Ներկայացուցիչ Արթուր Սուքիասյան) ՀՀ վարչական դատարան է հասցեագրել հայցադիմում ընդդեմ Վանաձոր համայնքի ղեկավարի՝ խնդրելով մասնակի՝ Վանաձոր համայնքի Գր. Լուսավորչի փողոց, թիվ 37-2/3 հասցեում կառուցված բետոնե աստիճաններն ապամոնտաժելու հանձնարարություն տալու մասով (որոշման 2-րդ կետ) ճանաչել անվավեր, որը ստացել է ՎԴ6/0313/05/22 համարը:

Նելլի Մարտիրոսյանը 28.02.2023թ. ներկայացրել է երրորդ անձ ներգրավելու վերաբերյալ դիմում, որը Դատարանի 29.03.2023թ. որոշմամբ բավարարվել է:

Նելլի Մարտիրոսյանը թիվ ՎԴ6/0313/05/22 վարչական գործով ներկայացրել է հայցադիմումի պատասխան: Նշված գործով, ինչպես վերը նշվել է, Նելլի Մարտիրոսյանը հանդիսանում է Գայանե Մարտիրոսյանի հակառակորդ կողմը և նրանց շահերի միջև առկա է հակասություն:

Պատասխանելով վերը թվարկված չորրորդ հարցադրմանը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենքով նախատեսված համաձայնությունը հարկավոր է բոլոր դեպքերում, երբ առկա են հակադիր շահեր փաստաբանի ներկա և նախկին վստահորդների միջև, ինչը փաստաբանի համար առաջացնում է պարտականություն՝ իր նախկին վստահորդի գրավոր համաձայնությունը ստանալուց հետո միայն իրավաբանական օգնություն ցույց տալ նույն հարցով կամ գործով նոր վստահորդին: Փաստաբանի սույն պարտականությունը բխում է իր վստահորդի շահերով առաջնորդվելու և բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց տալու ընդհանուր պարտականությունից:

Սույն կարգապահական գործի շրջանակներում չի ներկայացվել որևէ գրավոր փաստաթուղթ, որով կհավաստվեր, որ Դիմողը գրավոր համաձայնություն է տվել Պատասխանողին իր հետ շահերի հակասություն ունեցող անձի շահերը ներկայացնելու վերաբերյալ:

Պատասխանելով վերոհիշյալ 1-4 ենթակետերում նշված հարցերին, Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի կողմից խախտվել են Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «ա» ենթակետի և Կանոնագրքի 3.2.2 ենթակետի պահանջները:

Հանձնաժողովը հիշեցնում է, որ փաստաբանը, հանդիսանալով իրավապաշտպան գործունեություն իրականացնող և քաղաքացիական հասարակության կարևորագույն ինստիտուտներից մեկը՝ փաստաբանությունը ներկայացնող անձ, ունի առանձնահատուկ սոցիալ-իրավական կարգավիճակ, որը չի սկսվում և ավարտվում միայն վստահորդի

հանձնարարության պատշաճ կատարմամբ, այլ ընդգրկում է փաստաբանի իրավական և բարոյական պարտականությունների որոշակի ամբողջություն: Մասնավորապես, փաստաբանը պետք է մշտապես գործի իր վստահորդի շահերին համապատասխան, և վստահորդի շահերը դասի իր շահերից վեր, անգամ այն դեպքերում, երբ նա արդեն նախկին վստահորդ է:

Օրենքով նախատեսված սահմանափակումն ուղղված է շահերի բախման դեպքում իրավաբանական օգնության արգելքին, ինչն իր հերթին կոչված է երաշխավորելու փաստաբանի կողմից իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ լիակատար անկախությունը՝ այդ թվում տարբեր շահերից, որոնք կարող են ազդել վերջինիս կողմից անձին իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ անկախ և բարեխիղճ լինելու վրա՝ ապահովելով վստահորդի շահերի արդյունավետ պաշտպանությունը, ինչպես նաև չվնասելով նախկին վստահորդին:

Նման մոտեցումը բխում է նաև փաստաբանության սահմանադրական-իրավական կարգավիճակից, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/2598/02/11 քաղաքացիական գործով 25.12.2012թ. որոշմամբ ներկայացված իրավական դիրքորոշումից, ըստ որի.

«2. Իրավաբանական օգնության արգելքը

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ օրենսդիրը, փաստաբանի համար նախատեսելով իրավաբանական օգնություն ցույց տալու համար համապատասխան երաշխիքներ, սահմանելով նրա հիմնական իրավունքները և պարտականությունները, նախատեսել է վերջինիս կողմից իրավաբանական օգնություն ցույց տալու և իր իրավունքների իրականացման որոշակի առանձնահատկություններ և սահմանափակումներ, որոնք ուղղված են Օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված փաստաբանության սկզբունքների, մասնավորապես անկախության և օրինապահության սկզբունքների ապահովմանը:

Այդ նպատակով Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ նախատեսված է, որ փաստաբանն իրավունք չունի իրավաբանական օգնություն ցույց տալու այն դեպքում, երբ

1) առկա է հակասություն նույն հարցով իր կամ իր վստահորդների շահերի միջև.

2) տվյալ գործին մասնակցել է որպես դատավոր, դատախազ, քննիչ, հետաքննության մարմնի աշխատող, փորձագետ, տուժող կամ վկա, ինչպես նաև եթե նա հանդիսացել է պաշտոնատար անձ, որի իրավասության մեջ էր մտնում տվյալ անձի շահերից բխող որոշման ընդունումը.

3) ազգակցական, անձնական կամ կախյալ հարաբերությունների մեջ է գտնվում այն պաշտոնատար անձի հետ, որը մասնակցել կամ մասնակցում է տվյալ անձի գործի քննությանը.

4) պետք է ներկայացնի վստահորդի շահերը որևէ գործում, և այդ անձի շահերը հակասում են նախկին վստահորդի շահերին, բացառությամբ այն դեպքերի, երբ նախկին վստահորդը տալիս է իր գրավոր համաձայնությունը:

<u>Վերոնշյալ հոդվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենքով նախատեսված սահմանափակումն ուղղված է շահերի բախման դեպքում իրավաբանական օգնության արգելքին, ինչն իր հերթին կոչված է երաշխավորելու փաստաբանի կողմից իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ լիակատար անկախությունը՝ այդ թվում տարբեր շահերից, որոնք կարող են ազդել վերջինիս կողմից անձին</u>

<u>իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ անկախ և բարեխիղճ լինելու վրա՝ ապահովելով վստահորդի շահերի արդյունավետ պաշտպանությունը</u>*: Այս սկզբունքն ուղղակիորեն ամրագրված է նաև Իրավաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքների 14-րդ կետում, որի համաձայն՝ իրենց հաճախորդների իրավունքները պաշտպանելիս և արդարադատության շահերը պահպանելիս իրավաբանները պետք է նպաստեն ազգային և միջազգային իրավունքներով ճանաչված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությանը և բոլոր պարագաներում գործեն անկախ ու բարեխղճորեն՝ օրենքին և ընդունված նորմերին ու իրավաբանի մասնագիտական բարոյականությանը համապատասխան:*»:

Բացի այդ, ՀՀ Սահմանադրական դատարանը թիվ ՍԴՈ 1263 որոշմամբ սահմանել է, որ *փաստաբանության խնդիրն է անձին որակյալ իրավաբանական օգնության տրամադրումը:* Ըստ այդմ, փաստաբանը հանդիսանալով իրավապաշտպան գործունեություն իրականացնող և քաղաքացիական հասարակության կարևորագույն ինստիտուտներից մեկը՝ փաստաբանությունը ներկայացնող անձ, ունի առանձնահատուկ սոցիալ-իրավական կարգավիճակ, որը չի սկսվում և ավարտվում միայն վստահորդի հանձնարարության պատշաճ կատարմամբ, այլ ընդգրկում է փաստաբանի իրավական և բարոյական պարտականությունների որոշակի ամբողջություն: Մասնավորապես, փաստաբանը պետք է մշտապես գործի իր վստահորդի շահերին համապատասխան, և վստահորդի շահերը դասի իր շահերից վեր, անգամ այն դեպքերում, **երբ նա արդեն նախկին վստահորդ է:**

Տվյալ դեպքում Կանոնագրքի 3.2.2 ենթակետը վկայակոչող (բլանկետային) կանոն է և գործում է Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հետ միասին:

Հանձնաժողովը ցանկանում է նաև անդրադառնալ 25.07.2023թ. Փաստաբանի կողմից ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովին ներկայացված 14.03.2023թ. համաձայնագրին:

Օրենքի 39.5-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերի համաձայն՝ սպասարկող անձնակազմի աշխատակիցն իրավունք ունի փաստաբանից կամ կարգապահական խախտման մասին հաղորդում (դիմում, տեղեկանք, միջնորդություն) ներկայացրած անձից (մարմնից) պահանջելու ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, որոնք տվյալ անձանց (մարմինների) ազդեցության ոլորտում են կամ պետք է լինեն: Ապացույց ներկայացնելու պահանջը ենթակա է կատարման այն ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում կատարման անհնարինության դեպքում պահանջի հասցեատերը գրավոր դիմում է փաստաբանների պալատի նախագահին՝ հայցելով կատարման նոր ժամկետ կամ հայտնելով որոշման կատարման անհնարինության մասին՝ նշելով անհնարինության պատճառները: Փաստաբանների պալատի նախագահն իր որոշմամբ կարող է սահմանել նոր ժամկետ կամ հարգելի ճանաչել ապացույց չներկայացնելու պատճառները:

6. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում պահանջված ապացույցը չներկայացնելու կամ ապացույց ներկայացնելու համար նոր ժամկետ չսահմանելու կամ ապացույցը չներկայացնելու պատճառները հարգելի չճանաչելու դեպքում դա կարող է

մեկնաբանվել ի վնաս պահանջի հասցեատիրոջ, եթե ապացուցման ենթակա փաստը, որի վերաբերյալ անհրաժեշտ էր պահանջվող ապացույցը, մնում է չապացուցված:

Սույն գործով կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ ներկայացնելու մասին 08.05.2023թ. պահանջը Փաստաբանը ստացել է 16.05.2023թ.:

21.05.2023թ. Փաստաբանը ներկայացրել է բացատրություն և կցել ապացույցներ, որոնց մեջ առկա չի եղել 25.07.2023թ. ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովին ներկայացված 14.03.2023թ. համաձայնագիրը:

Փաստաբանը դիմում չի ներկայացրել փաստաբանների պալատի նախագահին՝ հայցելով կատարման նոր ժամկետ կամ հայտնելով որոշման կատարման անհնարինության մասին, հետևաբար հարգելի չի ճանաչվել նաև ապացույց չներկայացնելու պատճառները:

Հանձնաժողովը արձանագրում է նաև, որ 16.05.2023թ. Փաստաբանը ներկայացրել է թիվ ՎԴ6/0313/05/22 վարչական գործով միջնորդություն՝ գործի վարույթը հետաձգելու վերաբերյալ, որում նշել է. ***«միաժամանակ, հաշվի առնելով, որ ես չեմ ընդունում, որ առկա է իմ կողմից Գայանե Մարտիրոսյանի հանձնարարությունն ընդունելը բացառող հանգամանք, ներկայումս ես չեմ կարող դադարեցնել փաստաբանական ծառայությունների մատուցումը»:***

14.08.2023թ. կարգապահական գործի քննության ընթացքում Հանձնաժողովի անդամ՝ Գուրգեն Թորոսյանը Փաստաբանին հարց է ուղղում. *«ներկայացրել եք 14.03.2023թ. համաձայնագիր, որով լուծվել եք Ձեր միջև կնքված պայմանագիրը, այսինքն պետք է ընդունեք, որ այս պահից Ձեր իրավահարաբերությունները Գայանե Մարտիրոսյանի հետ, ինչպես նաև որպես ներկայացուցիչ դադարել են թե ոչ»*:

Պատասխան՝ «***այո դադարել են»:***

Այս համատեքստում, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում նախ ընդգծել այն, որ Փաստաբանը չի նշել որևէ պատճառ, թե ինչու չի ներկայացրել 14.03.2023թ. համաձայնագիրը՝ պահանջը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում, եթե այն առկա է եղել: Հարկ է նաև նշել, որ Փաստաբանը իր կողմից ներկայացված 21.05.2023թ. բացատրության մեջ նույնպես չի նշել, որ առկա է նման համաձայնագիր: Ավելին, Փաստաբանը իր կողմից ներկայացված 21.05.2023թ. բացատրության մեջ նշել է, որ Դատարանից խնդրել է հետաձգել դատական նիստը, որպեսզի իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի շրջանակներում քննարկվող հարցերը պարզելուց հետո հնարավորություն ունենա որոշել իր կողմից Գայանե Մարտիրոսյանի շահերը ներկայացնելու թույլատրելիության հարցը:

Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ 25.07.2023թ. Փաստաբանի կողմից ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովին ներկայացված գրության մեջ նշվել է. «թիվ ԿԳ-23017 կարգապահական գործով ներկայացնում եմ 14.03.2023թ. իմ և Գայանե Մարտիրոսյանի միջև կնքված իրավական օգնություն ցույց տալու պայմանագիրը լուծելու մասին համաձայնագիրը, որով հիմնավորվում է, որ Նելլի Մարտիրոսյանի բողոքից հետո իմ և Գայանե Մարտիրոսյանի միջև ծագած իրավահարաբերությունները դադարեցվել են (…)»:

Վերոգրյալից ավելի քան ակնհայտ է, որ Փաստաբանը ներկայացրել է իրարամերժ դիրքորոշումներ ծառայությունների մատուցման վերաբերյալ, իսկ ներկայացված ապացույցները և գործում առկա տեղեկությունները վկայում են այն մասին, որ Փաստաբանը շարունակել է ցույց տալ իրավական օգնություն Գայանե Մարտիրոսյանին:

Այս համատեքստում Փաստաբանի կողմից ներկայացված համաձայնագիրը չի կարող դիտարկվել արժանահավատ, ավելին՝ նշված համաձայնագիրը չի կարող դիտարկվել նաև թույլատրելի, քանի որ ներկայացվել է սահմանված ժամկետի խախտմամբ:

Վերոգրյալի հաշվառմամբ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանը թույլ է տվել «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «ա» ենթակետի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.2.2 ենթակետի խախտում, որի համար ենթակա է կարգապահական պատասխանատվության:

Միևնույն ժամանակ Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն կարգապահական գործի շրջանակներում չեն ներկայացվել այնպիսի ապացույցներ, որոնք կվկայեն, որ Փաստաբանի վարքագծում առկա է Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի և 5-հոդվածի 1-ին կետի խախտման հատկանիշներ: Հետևաբար, այդ մասով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Կարգապահական տույժի ընտրությունը.

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները, ինչից ելնելով նրա նկատմամբ կիրառում է ամենամեղմ՝ «նկատողություն» կարգապահական տույժը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 11.1-րդ հոդվածի 3–րդ մասի 1–ին կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.10.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 39.7-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջներով, Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արթուր Միքայելի Սուքիասյանի (արտոնագիր՝ թիվ 1251) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «ա» ենթակետի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.2.2 ենթակետի խախտման համար:

2. Փաստաբան Արթուր Միքայելի Սուքիասյանի (արտոնագիր՝ թիվ 1251) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի և Օրենքի 5-հոդվածի 1-ին կետի մասով՝ կարճել:

3. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում այն փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

թիվ ԿԳ-23017-3-Ա
24 օգոստոսի 2023թ.
ք. Երևան